

ՄԱՅԸ ԵՒ ԵՍ

Մահը դաշինք է կնքեր
Հետս կարծես ակամայ,
Կ'ուզէ ըլլալ ինձ ընկեր
Շուքի մը պէս մշտակայ:

Ժամագրութիւն ունի ան
Հետս բռնի, անդադար,
Եւ ամէն ժամ ու վայրկեան
Խօսիլ կ'ուզէ անբարբառ:

Կը նախանձի քայլերուս,
Ինծմէ առաջ կը վազէ,
Ու ցոյց կուտայ խոր, անլոյս
Վիճեր, փոսեր աւազէ:

Ֆիլատելֆիա, 12 Ապրիլ 1944

Հ. ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՃԱՐ

Խաչապըսակ կամար կամար
Անդերու մէջ սարերն ի վեր.
Կը բարձրանան ոսկեկաւար
Հայրենիքիս լոյս տաճարներ:

Ճամբայ մը լուռ կը գալարուի
Քաղքին մէջէն ծորան ծորան,
Կը կորսուի ու կը բացուի
Առջեւ ժամու մը հայկական:

Կանաչ կարմիր սարի կողէն
Արահետ մը վար կը քակուի,
Հոն լըռութեան մէջ հոյաչէն
Մարմար տաճար մը կը բացուի:

Խաչապըսակ կամար կամար
Դաշտերուն մէջ սարերն ի վեր,
Կը կոթողուն լուսակաւար
Հայրենիքիս բեր տաճարներ:

Աղեքսանդրիա

24 - 10 - 43

Ու կը սպառնայ ինծի միշտ՝
Սիրով խնդայ սիրտըս երբ,
Ու պատճառել կ'ուզէ վիշտ
Չարութիւնով դաւածեփ:

Ան կ'ուզէ որ լուռ մընամ՝
Յոյսին երես դարձուցած,
Եւ օրերս իմ լուսածամ
Դառնան կսկիծ, աղէտ, լաց:

Բայց ես ճամբաս կը քալեմ
Գոհ, անտարբեր ու անվախ,
Մահէս յետոյ՝ զի գիտեմ
Կ'ապրին երգերն իմ խիղախ:

Վերն ամեհի ժայռի կուրծքին
Հիւզեր քովէ քով կը շարունին.
Փայտէ տընակ, խաչ մը ճակտին
Ահա տաճարն հայ գիւղակին:

Զինակաւոր ամպերն ի վեր
Կը թափառի գիծ մը լայնչի.
Ան հայրերուս ճամբան է դեռ՝
Երբ մոմերով ուխտի գացին:

Կը հեղեղի լոյս մը այգուն
Ուսերն ի վար կատարներուն,
Հազար կայծեր կը բռնունին
Լուսաւորչի տաճարն հանգոյն:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԿ

ԽՈՐՀՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆ-ԷՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՋ
ՀԱՆՁՆՈՒԱԾ ՀԱՅ ԳՐԱԳԵՏՆԵՐ. — Հրա-
տարակուած է «Հայկական Դորապիկեր» տիտ-
ղոսի տակ հաւաքածոյ մը հայ գրողներու
գործերէն՝ թարգմանուած ռուսերէնի: Կը պա-
րունակէ արեւելահայ և արեւմտահայ գրագէտ-
ներէն ընտրուած քառասուն պատմութեանքներ
հետեւեալ հեղինակներէն՝ Գրիգոր Զօհրապ, Յա-
կոբ Պարոնեան, Երուսեմ Օտեան, Ռուբէն
Զարգարեան, Երուսեմ, Յովհաննէս Թումա-
նեան, Շիրվանզադէ, Նարգոս, Դերենիկ Դե-
միրճեան, Ստեփան Զօրեան: Այս հաւաքածոյի
մասին՝ ռուս գրագէտ մը՝ Խերսոնսկի, մեծ
գովեստով կը խօսի ներկայացնելով զայն ռուս
հասարակութեան, կը շեշտէ մանաւանդ Սովե-
տական Հայաստանի մէջ վերջերս երեւան եկած
տական Հայաստանի մէջ վերջերս երեւան եկած
յայտնի գէմքերը, գլխաւորապէս Ստ. Զօրեանը՝
եր «Սպիտակ քաղաք»-ին մէջ, և Դ. Դեմիր-
ճեանը՝ Ժողովրդական կեանքէ առած նոր
վէպերուն և «Վարդանանք» մեծ պատմական
վէպին մէջ:

ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ 2000-ամեակը. — Երեւանի
մէջ տօնախմբուած է այս տարւոյն ընթացքին
հայ թատրոնի 2000-ամեակը: Այս առթիւ ա-
յացուցուած է որ հայ թատրոնը ամենահինն է
բովանդակ Սովետական Միութեան ազգերու
հնագոյն պատմութեան մէջ: Եւ ստուգիւ ըստ
արձանագրութիւններու Հայաստանի մէջ առա-
ջին թատրոնը կառուցուած է Տիգրանակերտի
մէջ 69-ին Քրիստոսէ առաջ, և երկրորդ մը
53-ին Արտաշատի մէջ, ուր բեմագրուած
է Եւրիպիդէսի «Քրմանոյնները» ողբերգու-
թիւնը: Ներկայիս Արտաշատի շրջակայքը
սկսած են վերակառուցանել հինուորաց ամփի-
թատրոնը, և ուր 1947-ին ծրագրուած է ներ-
կայացնել «Քրմանոյնները»:

Տ. ԶՈՒՀԱՃԵԱՆԻ ԱՐՇԱԿ Բ.Ը — Երեւանի
Սպենդիարեանի անուան Պետ. Օբերայի մէջ
բեմագրուած է նշանաւոր Տիգրան Զուհա-

ճեանի Արշակ Բ. Թատրերգութիւնը մեծ յա-
ջողութեամբ, որ 1868-ին Պոլսոյ մէջ, Նաուսի
թատրոնի բեմին վրայ ներկայացուած էր առա-
ջին անգամ ղեկավարութեամբ Երգահանին:

Ժ.Թ. դարու կիսուն հայ երաժշտութեան մե-
ծագոյն ներկայացուցիչն է ան և հայկ. օբերայի
հիմնադիր. իր գործերն են նաեւ Զիւլիքի օբերան
(1891), Արիֆ (1872), «Քէօսա Քէհա» (1874)
և «Լէբլեբլի Զօհր Սալա» երեք օբերէթ-
ները: Իտալական մամուլը անուանած էր զինքը
«Իւ Վերուի Արմէն» (Հայ Վերուի): — Տ. Զու-
հաճեան ծնած է 1837 և մեռած 1898-ին:

ՄԱՔՍԻՄ ԿՈՐԲԻՒ ՄԱՀՈՒԱՆ 10-ամեակին
Սով. Միութեան զանազան քաղաքներու մէջ
տեղի ունեցած են գրական ակումբներ, հաւա-
քոյթներ վերագնահատելու համար մեծ գրա-
գէտին արժանիքը: Սով. Միութեան ազգերու
լեզուներով բեմագրուած են անոր թատերա-
խաղերը, այսպէս «Թշնամիները», «Զեքոյնե-
խաղերը», «Արեւի տղաքը» և այլն: Մաքսիմ Կոր-
բին գործերը շատ սիրուած և կարգացուած
են Սով. Միութեան Ժողովուրդներու քով:
Թարգմանուած են բազմաթիւ լեզուներու:
Անոր «Մայրը» վէպը 106 անգամ հրատարա-
կուած է, «Մանկութիւնը» 77 անգամ:

Փարիզի մէջ՝ 25 Յունիսին Փլէյելի Սրահին
մէջ Ժ. Ռիշար Պլեք խօսած է հոն բազմու-
թեան մը առջեւ մեծ գրագէտին վրայ՝ ցոյց
տալով անոր բացառիկ արժանիքը:

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ
25-ամեակը. — Մեծ հանդիսաւորութեամբ տօ-
նախմբուած է Երեւանի մէջ Պետական Համա-
լսարանի 25-ամեակը՝ գիտական-գրական նիս-
տերով Ապրիլ 22-26-ին: Առաջին նիստին խօսք
առած են ակադեմիական Յ. Մանանդեան և Վ.
Համբարձումեան: Ներկայ եղած են ուրիշ ա-
կադեմիականներ, փրոֆէսորներ և գիտահե-
տազօտական Հաստատութեան աշխատողներ և
ուսանողներ:

Համալսարանի Տնօրէն - վարիչ Հրաչեայ
Բունեաթեան բացած է նիստը՝ բացատրելով